

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Աննպաստ քաղաքականութիւն. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ կազմակերպիչ.
Նամակ կարգի. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ ծրարաբայից. Արտաքին
լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական նը-
ւադահանդէս Կ. Պոլսում:

ԱՆՆՊԱՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ամեն անգամ, երբ մի որ եւ է արհեստ
սկսում է անաղորդութիւնների հանդիպել,
այդ արհեստի ներկայացուցիչները, փոխա-
նակ կատարելագործութիւնների մասին
մտածելու եւ մրցութեան ուրիշ միջոցներ
մշակելու, դիմում են կառավարութեան
խնդրելով արտօնութիւններ իրանց հա-
մար: Նրանք խնդրում են, օրինակ, մաքս
դնել ներմուծվող ապրանքների վրա եւ
այդպիսով արհեստական կերպով բարձրաց-
նել գները շուկայում, կամ պահանջում
են, որ իրանց արդիւնագործութեան զար-
գացման համար մաքսի ենթարկվեն այն
հում նիւթերը, որոնք արտահանվում են
դէպի օտար երկրները, եւ այդպիսով ու-
րեմն արհեստական կերպով էժանացվեն
նրանց արդիւնագործութեան համար կա-
րեւոր նիւթերը:

Այդ եղանակին հետեւում էին վերջին
ժամանակներս Ռուսաստանի եւ Գերմա-
նիայի արդիւնագործներից շատերը: Միւս
պետութիւնների մէջ եւս նկատվում էին
այդ տեսակ ձգտումներ մեծ ու փոքր չա-
փով: Եւրոպական պետութիւնների մէջ
կար միայն մէկը, որ չէր ենթարկվում
մաքսամուծութեան աստիճան, եւ այդ խնդրում
շատ որոշ եւ հաստատ դիրք էր բռնել
տարիների ընթացքում: Անգլիան շատ դը-
ժուարութեամբ էր սահմանում մաքսեր
եւ աշխատում էր նրանց թիւը եւ աստի-
ճանը հասցնել նուազագոյն չափի: Շնոր-
հի այդ խնդրում իր բռնած հաստատ
դիրքը: Անգլիայի արդիւնագործութիւնը
ամառ էր գնում, իր յուրը դրած անընդ-
հատ կատարելագործութիւնների եւ մրցու-
թեան նորանոր միջոցների վրա:

Սակայն Անգլիան էլ չէր կարողացաւ ան-
յողողղղ մնալ իր որոշման մէջ եւ նա էլ

իր կողմից հարկ տուեց ժամանակակից
հոսանքներին: Պարլամենտը հաւանութիւն
տուեց նոր մաքսերի, որոնք ստացան օրի-
նական նշանակութիւն: Օրինակ, այսու-
հետեւ Անգլիայից արտահանվող բարա-
ժուրը պետք է ենթարկվի մաքսի, որ
հաւասար է մի շիլլինգի: Հաշված մի տօնի
վրա, եւ պետք է տուրքի ենթարկվի Անգ-
լիա ներմուծվող շաքարը:

Այդ մաքսերի սահմանումը մասամբ
արդիւն էր անգլո-տրանսպարեան պատե-
րազմի, որ պահանջեց անգլիական կառա-
վարութիւնից ծախքեր եւ հերթական շի-
նեց նոր հարկերի սահմանումը: Սակայն
ոչ միայն Անգլիայում, այլ եւ Եւրոպայի
միւս երկրներում այդ մաքսերի սահմա-
նումը ծանր տպաւորութիւն գործեց:
Նոր տուրքերի, մաքսերի եւ հարկերի հա-
կառակորդները միշտ մի առանձին պատ-
կառանքով էին վերաբերվում դէպի Անգ-
լիան եւ յայտնէին նրա բռնած քաղա-
քականութեան շնորհիւ: Համոզել եւ միւս
պետութիւններին, որ վերջ դնեն ան-
վերջ ծանրութիւններ սահմանելուն:

Յաւալի է, որ Անգլիան եւս ոտը կոխեց
այդ ճանապարհի վրա: Գուցէ մի բան
միայն ուսանելի լինի եւրոպական միւս
պետութիւնների համար, որ իրանց բռ-
նած ետական քաղաքականութեան դէմ
կարող եւ ուրիշները նորիսման հա-
կակողով քաղաքականութիւն գործ դնել
եւ այդպիսով մի նախազգուշացում առաջ
բերել մաքսի ջերմ պաշտպանների հա-
մար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Հ

Գաւառների զարգացման եւ առաջադիմու-
թեան հարցին մի գեղեցիկ յօդուած է նուիրել
«Русскія Вѣд.» լրագիրը: Այդ առաջադիմու-
թիւնը անուրանալի է:

Մտաւոր կեանքը, որ քսան-երեսուն տա-
րի առաջ կենտրոնացած էր համարեա բա-
ցառապէս մայրաքաղաքներում, այժմ լայն
տարածվել է եւ սկսել է երեւան գալ մեր
հայրենիքի նոյն իսկ ամենահեռաւոր ան-
կիւններում: Սովորաբար, նոյն իսկ այն
հասարակական դասակարգերի մէջ, որոնք մի
քանի ժամանակ առաջ տգէտ էին, հանդէս

եկան կրթված մարդիկ եւ զարձան կուլտու-
րա ու լուսաւորութիւն տարածողներ: Նը-
րանք բերին իրանց հետ եւ զարթոյցին ու-
րիշների մէջ մտաւոր գործունէութեան եւ
կուլտուրական աշխատանքի պահանջ եւ
այնտեղ, ուր քիչ առաջ ամեն ինչ թաղ-
ված էր խոր քնի մէջ, սկսեց երեւան գալ
կեանքը: Մեր դասուր զարթոյցը:

Բայց քնից զարթնած գաւառը կարօտ
է այնպիսի մտաւոր-առաջադիմական հիմնա-
րկութիւնների, որոնք աւելի եւս առաջ տա-
նէին նրան: Այդ հիմնարկութիւններից մէկն է
եւ պարբերական մամուլը: Ռուս լրագիրը
քննադատում է գաւառական մամուլին վերա-
բերված օրէնսդրութիւնը եւ համարում է այն
եղբակացութեան, որ այդ օրէնսդրութիւնը
հնացել է, չէ համապատասխանում ժամանա-
կակից պահանջներին, ուստի եւ խոչընդոտ է
հանգիստեալ մամուլի ազատ եւ անկախ զար-
գացման գործում: Յենգուրայի եւ մամուլի
մասին օրէնսդրութիւն հրատարակվել է 35
տարի առաջ եւ այդքան ժամանակամիջոցում
շատ քիչ բան է արված մամուլի դրութիւնը
վերջացնում է ցանկութեամբ, որ գաւառական
լրագիրներն էլ մայրաքաղաքի լրագիրների ի-
րաւունքն ստանան, այսինքն հրատարակվեն
առանց նախնական ցենզուրայի: Այդ ցանկու-
թիւնը միանգամայն օրինաւոր է, քանի որ
կառավարութեան թոյլտուութեամբ գաւառական
լրագիրներից մէկը թէ երկուսը արդէն վայե-
լում են այդ արտօնութեամբ: Սրա վրա պէտք
է աւելացնենք, որ վերջին ժամանակներս առ-
հասարակ ամբողջ առասաց մամուլը խօսում է
Ռուսաստանում գոյութիւն ունեցող տպագրա-
կան օրէնքների մասին եւ գտնում է, որ այդ
օրէնքները շատ են հնացել եւ պէտք է վերա-
քննել նրանց, խմբագրել ժամանակին եւ մա-
մուլի գործած առաջադիմութեան համապա-
տասխան ոգով:

Թիֆլիսում, ինչպէս յայտնի է, նորից ար-
ծարծվում է կովկասեան պոլիտեխնիկումի
հարցը: Այս տարի պէտք է տօնիկ կովկասում
առասաց տիրապետութեան հաստատվում հա-
րիւրամեակը եւ այս առիթով Թիֆլիսի դու-

ման վճել է խնդրել կառավարութիւնից, որ
ի յիշատակ այդ յօդուածի բացվի պոլիտեխնի-
կում: Բարձրագոյն դպրոց բաց անելու հարցը,
եթէ յիշում են մեր ընթերցողները, մեծ աղ-
մուկ հանեց երկու-երեք տարի առաջ: Հայա-
կեր հրապարակախօսները պահանջում էին զը-
կել ամբողջ կովկասը մի այդպիսի կրթական
հաստատութիւնից, որովհետեւ, ասում էին
այդ պարտնները, պոլիտեխնիկումը մէջ կարող
են եւ հայեր սովորել: Եւ օրովհետեւ այդ բա-
նը սարսափելի աղէտ էր հայերի անխիղճ թըլ-
նամիների համար, ուստի նրանք կանչում
էին. «հայերնիքը վտանգի մէջ է»: Այժմ էլ, երբ
նորից պոլիտեխնիկումի հարց կայ, մենք տես-
նում ենք, որ դեռ հնութեան կարգը չեն անցել
ծանօթ աղաղակները եւ հայակերները դեռ
կենդանի են: Զանազանութիւնն այն է միայն,
որ այժմ այդ պարտնները կովկասեան առան-
ներից դուրս են կուրծք ծեծում: Այսպէս ահա
«Московскія Вѣд.» լրագիրը տպագրել է «Հայ-
կական պոլիտեխնիկում» յօդուածը: Մանրա-
մասն խօսել այդ յօդուածի մասին չարժէ. վեր-
նագիրը ամեն ինչ բացատրում է: Մեզ միայն
մնում է զարմանալ այդ մութ ու նեղօրէտ
մարդկանց տոկոսութեան վրա. ինչպէս է որ
չեն ձանձրանում մի եւ նոյն անհամ, ծածմած,
հարիւր ու մի անգամ խայտառակված «մոքե-
րը» կրկնելու: Մենք արդէն կատարելապէս
ձանձրացել ենք Սովորինի եւ Գրիգորեանի
«հայրենասիրական» օտարակրթեան եռան-
դից: Բայց երբ պէտք է իրանք, այդ պարտ-
ներն էլ ձանձրանան: Հօ ամեն մարդ գիտէ
արդէն, թէ ինչ պտուղներ են դրանք, հօ միայն
հայերը չեն ամբողջ ժամանակ հանում նրանց
աչքերը, այլ եւ ամեն մի նոր, արդար, առաջա-
դիմական սկզբունք, որ Սովորինի—Գրիգոր-
եանեան խաւարապաշտութեան տեսակետից
այնքան զարհուրելի է, որովհետեւ միայն մի
բան ցանկալի է այդ բանակին—խաւար եւ
խաւար: Թշնամի ունենալ այդպիսի խաւար
ու սեւ հերոսներին—միայն պատիւ կարող է
բերել:

ՆԱՄԱԿ ԿԱԶՁՈՒԱՆԻՑ

Ապրիլի 14-ին
Նախորդ նամակովս արդէն գրել էի, որ
կազմակերպիչ երկուցու շնորհեան գործը վեր-
ջացաւ հաշտութեամբ, բայց, Թիւրքիստանի
ներքին տեղիքը չէր տալու համար, աւելորդ չէր

կազմակերպիչ աղջիկ մը, դեռ այն տա-
րիքին մէջ՝ ուր կարծես պարզեաւազայնութեան
հանդէսի մը կելլէր եւ իր մրցանակները առ-
նելու համար կը յառաջանար: Եւ արդարեւ,
մրցանակներու էն յարգին ստացաւ, հանդիսա-
կաններու երկարատեւ ծափերը: Իր վարպե-
տին Պ. Պառաւնի հետ, որ դաշնակի վրա կըն-
կերանար անոր, օր. Մոլաւազը շուրջակայ
բուհի կանխահաս տարւոյ մը ցուցադրեց,
թէ իր կատարած վարժ ուսումնասիրութեանց
արդիւնքով եւ թէ իր բնական հակումովը,
որոնք ի յայտ կուգային ճպտին ու իր փոք-
րիկ մասններուն ճարտար շարժումներուն մէջ:
Նոյն ծափերու խօլ տարափը՝ օր. Գալանտ-
գեանի, որուն debut-ն, սկզբնաւորութիւնը,
յոյժ քաջաւերական ու պատուաբեր եղաւ ի-
րեն համար, երբ զօրաւոր, մարդուած ձայնով
մը երգեց Ամի Ռօպապի ժողովուրդ եղանա-
կը, առանց affectation-ի, ինչպէս շատ իրա-
ւամբ դիտել տուած էր Բիւրայի ֆրանսերէն
թերթ մը.—պարզութեամբ մը, որ աւելի աղ-
ղու կը զարձնէր իր երգումը:

Այս միջոցին, բնայն մօտ, մեր կարգին վրա,
կը նշմարեմ օր. Մաղիկեանը, որ սովորական
հանդիսականներէն աւելի աղէկ գիտէ ու կը
զգայ յարգը այդ ծափերուն, զորս նախորդ
տարիները ինքն ալ խլեց իր համակրելի մաս-
նակցութեամբ:

Կարգը եկած էր Տիրան պէն Ալեքսանեանին,
ճշմարիտ արուեստագէտ մը, վարպետ մը գրե-
թէ իր շատ երիտասարդ հասակին մէջ, որուն
կնոջական ըստեւելու չափ փափուկ մասններուն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՆԱՆԻՑ Կ. ՊՈԼՍՈՒՄ

«Մշակի» մէջ արդէն հաղորդված է, որ Կ.
Պոլսում տեղի ունեցաւ մի մեծ նուազահան-
դէս յօդուած Ազգային Հիւանդանոցի վերջին
տարիների ծանր դէպքերի պատճառով այդպի-
սի բան չէր տեսել Կ. Պոլսի հայ հասարակու-
թիւնը: Ուստի բերում ենք այստեղ «Մշակ»-
ը շաբաթաթերթից այդ երեկոյթի նկարագրու-
թիւնը:

Ժամը 7. Եւ արդէն իսկ «Եւրոպայի» մարմա-
րեայ լայն սանդուխտներէն դժուարաւ կարելի
է ելլել, այնչափ հոծ է մասնող բազմութիւնը:
Փողոցէն սկսելով, ուր կառքերու երկար շարք
մը յուշիկ յուշիկ կը յառաջանայ դէպի մուտքը
զուտը: Ներքը՝ գաւթակը, վէպիէնը, միջին
խորշը՝ կրկնացներու, մուշտակներու, հովանոց-
ներու անվերջ տեղաւորում մը: Թեթեւօտն
վեր կելլած, այն միամիտ ենթադրութեամբ
թէ քրանը դեռ կիտովին պարապ ըլլալու է,
հանդիսականներու մեծագոյն մասին ժամա-
նակը մի եւ նոյն ժամուն զուգահեռաբար ըլլա-
լով: Բայց հիւրամիժարներուն, կարգադիր մաս-
նախումբի երիտասարդ անդամներուն դէմքը ու-
րիշ տարիներու զուարթութիւնը չունի.—«Տեղ
չկայ».—այս է բոլորին ալ մտահոգութիւնը:
Եւ իրաւ ալ, սրահէն մինչեւ դուռը, մինչեւ

յետին անկիւնները, վերնատունը իր արտա-
քին մասովն իսկ, ուրիշ բան մը չի տեսնուիր,
բռնուած են: Մեր գեղեցիկ սեռը քիչ անգամ
այնքան զգրաւիչ եղած էր, որքան եղաւ կի-
րակի օրը: Հիւանդանոցի նուազահանդէսին
Այրերը շուրջաւ են պարզապէս եւ տիկիննե-
րը, օրիորդները գալովստոյի պէտք չեն թո-
ղուր անոնց, սպասուողի պէտք չեն թո-
րենք. կրողը կը սպրդի ներս, տեղ մը կը
գրաւէ՝ գէթ ոտքի վրա կենալու համար: Այս
պայմաններուն մէջ, մինչեւ թատերաբեմին
աղջիկ հասնիլ ուղղել՝ Ժիւլ-Վէնետական պատիկ
ճամբորդութիւնը մը ընելու պէս բան մըն պի-
տի ըլլար, որուն մէջ ինչպէս յաջողիլու են ալ
չեմ գիտեր, մինչ բարձրահասակ, հոգեկո-
ւարդիկներ գաւառում մնացեր էին կեցած տե-
ղերին: Սալափը միայն կը յիշեմ, որ անվերջ
հրմշտուկներու մէջէն, անզգալապէս բեմին
առջեւ գտաւ յանկարծ ինքզինքը, ավթոտակի
մը վրա նստած, որուն տիրապետումը վարդի մը
կեանքը ունեցաւ սակայն, անմիջապէս փո-
խանցուելու համար չնորհալի տիկնոջ մը, մե-
ծագոյն գոհոգութիւններու արժանի... ինչպէս
պիտի գրէր «Բերդանթէն», եթէ իրեն վիճա-
կուէր այս compte-rendu-ն իմ տարբիւ մէջ
մնալու համար, պիտի ըսեմ միայն թէ, ընդ-
հանուր նայուածքով մը, հիւանդի բանօրամա
մը կը պարզուէր այդ տեղին.—հազար հոգի,
թերեւս աւելի, միակ սրահի մը մէջ, արդու-
ղարդի, չեղողութեան, ու փոխադարձաբար
պարզութեան, անչեղութեան պէսպիսութիւն
մը ցուցադրող կնոջական բազմութիւն մը,

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27